# 7-րդ շաբաթ

## Թեմա՝ «Բնություն և կենդանական աշխարհ»

Ա. Ստորև տրված հարցերի օգնությամբ կառուցել 5-10 որպե տևողությամբ բանավոր տեքստ և ներկայացնել այն լսարանին:

**Հարցեր՝**

1. Ինչպիսի՞ բնություն ունի ձեր երկիրը:
2. Ի՞նչ լեռներ, ծովեր, լճեր գետեր, դաշտեր և ձորեր կան այնտեղ:
3. Նրանցից որո՞նք են հայտնի աշխարհում:

4. Ինչ բույսեր՝ ծառեր և ծաղիկներ են տարածված այնտեղ:
5. Նրանցից որո՞նք եք դուք սիրում և որո՞նք՝ ոչ:
6. Ինչ բույսեր եք դուք աճեցնում այգում կամ տանը:

7. Ի՞նչ կենդանիներ և թռչուններ կան ձեր երկրում:
8. Նրանցից որո՞նք եք դուք սիրում և որո՞նք՝ ոչ: Ինչու՞:
9. Ի՞նչ տնային կենդանիներ եք ունեցել կամ կուզեք ունենալ:
10. Որո՞ք են տնային կենդանի պահելու դժվարությունները:

***

Տեքստ կազմելիս ըստ ցանկության օգտվել առաջարկվող բառերից, բառակապակցություններից և այլ արտահայտություններից:

**Կիրառելի բառեր և արտահայտություններ՝**

| | | |
|---|---|---|
| ամենաբարձր լեռը | տնային | խոտ |
| ամենաերկար գետը | վայրի | բույս |
| ամենամեծ լիճը | մրգատու | ընտանի |
| ամենախորը լիճը | պտղատու | մսատու |
| ամենաջրառատ գետը | դեկորատիվ | կաթնատու |
| անտառներ | ծառ | բրդատու |
| ամենամեծ դաշտը | ծաղիկ | վանդակ |
| ամենախորը ձորը | թուփ | խնամել |

***

Բ. Յուրաքանչյուր ուսանողի ներկայացրած տեքստի հիման վրա, այլ տեղեկություններ ստանալու կամ տրված տեղեկությունը ճշգրտելու նպատակով տալ և ստանալ լրացուցիչ հարցեր՝ երկխոսելով մյուս ուսանողների հետ:

*Բնագրի նմուշ 1՝*

Հայաստանն ունի շատ հարուստ բնաշխարհ:

Հայաստանում հանդիպում է ավելի քան 3200 բուսատեսակ, որոնցից 120-ը աճում է միայն Հայաստանում: Նույնիսկ բազմաթիվ տեսակներ կոչվում են հենց Հայաստանի կամ նրա առանձին մասերի անուններով:

Բազմազան է նաև կենդանական աշխարհը, որտեղ հաշվվում է մոտ 12000 կենդանատեսակ: Դրանցից շատերը նույնպես հատուկ են միայն հայկական բնաշխարհին:

Հայաստանի բնությունը մեծ դեր է խաղացել հայ ժողովրդի պատմության մեջ: Այնպես, ինչպես Զրհեղեղից հետո այն դարձավ նոր մարդկության ձևավորման օջախ, այդպես էլ հետագայում հայոց բնությունը ձեռք է մեկնել իր ժողովրդին՝ հզոր թշնամիների դեմ պայքարի ժամանակ:

Սարերի ու ձորերի շնորհիվ էին հայերի ամրոցներն այդքան անառիկ ու անմատչելի: Գետերը վարարում էին, երբ ոսոխը անցնում էր նրանց միջով, իսկ լճերն իրենց փայլով կուրացնում էին թշնամիների աչքերը:

Բազմաթիվ երկեր և բանաստեղծություններ են նվիրված հայոց բնությանը, որտեղ երևում է, թե որքան է այն համահունչ հայ ժողովրդի դարավոր անցյալի ու մշակույթի հետ:

*Աղբյուր՝ findarmenia.org/arm/nature?fb_comment_id=10150646255155367_48177799*

*Բնագրի նմուշ 2՝*

Ես կուզեի կրիա ունենալ, որ նրան խնամեմ, կերակրեմ, պահեմ: Ես նրան կտանեի զբոսնելու: Ամռանը մեր գյուղի այգում ես ու եղբայրս մի գեղեցիկ կրիա տեսանք: Կերակրեցինք, շատ խաղացինք, ուզում էինք բերել քաղաք, պահել վանդակում, բայց հայրս չհամաձայնեց: Կրիայի գլխին՝ պատյանի վրա, կարծես ժապավեն նկարած լիներ:

Ասում են այդ կրիաները աղջիկ են: Հայրս ասաց, որ կրիան մեղք է վանդակի մեջ, թող ազատ ապրի բնության մեջ:

*Աղբյուր՝ sateniksatenik.wordpress.com/2018/11/23/իմ-սիրած-կենդանին/*